ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջեվան, (0263)42138 ijevancity@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՐՏԻ 2019թվականի N 14

ԱՎԱԳԱՆՈՒ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին օրենքի" 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով

Իջևան համայնքի ավագանին որոշում է

1. Իջևան համայնքի ղեկավար Վ.Ղալումյանի տարեկան հաշվետվությունը համայնքի 2018թ բյուջեի կատարման մասին

2. Իջևան քաղաքի Երևանյան փողոցի թիվ 7ա հասցեում գտնվող 105.2քմ մակերեսով ոչ բնակելի վարձակալության իրավունքը երկարացնելու մասին

3. Քաղաքաշինական և այլ նպատակներով հողամասեր հատկացնելու, ինքնակամ շինությունների և ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու մասին

4. Իջևան համայնքի վարչական տարածքում գտնվող բնակելի կառուցապատման հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

5. Իջևան՝ քաղաքի թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում փոփոխություն կատարելու մասին

6. Իջևանի համայնքապետարանի հաստիքացուցակում փոփոխություններ կատարելու մասին

7. Ռենո մակնիշի լվացող և Միլենիում մակնիշի մաքրող-սրբող ավտոմեքենաների մասին

8. Իջևան համայնքի Ղարագյոզյան փողոցի, թիվ 47 հասցեում գտնվող մանկապարտեզի հին շենքը ապամոնտաժելու մասին

9. Իջևանի համայնքապետարանի կողմից լավագույն ուսանողի կրթաթոշակ սահմանելու մասին

10. Համայնքապետարանի 2019թ տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին

11. «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առեվտրային կազմակերպության հետ կնքված պայմանագիրը լուծելու մասին

12. Երիտասարդական նախաձեռնությունների ֆինանսավորման դրամաշնորհային մրցույթ հայտարարելու մասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevancity@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՐՏԻ 2019թվականի N 15

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՂԱԼՈՒՄՅԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկելով համայնքի ղեկավար Վ.Ղալումյանի տարեկան հաշվետվությունը համայնքի 2018թ համայնքի բյուջեի կատարման մասին և ղեկավարվելով ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մասին" 18-րդ հոդվածի 5-րդ կետով

Իջևան համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել համայնքի ղեկավար Վ.Ղալումյանի տարեկան հաշվետվությունը համայնքի 2018թ բյուջեի կատարման մասին /կցվում է հաշվետվությունը/:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐՍԵՆ

ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՉԻԲՈՒԽՉՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԷՄԻԼ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ**

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի 2018թ բյուջեն կատարվել է 97.8%-ով, այդ թվում սեփական եկամուտների մասով 92.8%-ով: 2017 թ-ի համեմատ սեփական եկամուտներն աճել են 11 մլն դրամով:

Հարկային եկամուտների կատարողականը կազմվել է 90.2%, այդ թվում գույքահարկը կատարվել է 90.2%-ով, որից ֆիզիկական անձանց վճարումների հաշվին 87.7%-ով, իրավաբանական անձանց վճարումների հաշվին 116.2%-ով:

Ընդամենը տուրքերը կատարվել են 99.4%-ով, այդ թվում պետական տուրքերի գծով 98,7%-ով, տեղական տուրքերի գծով 99.9%-ով:

Ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար գանձվող տուրքը 2018թ կազմվել է 1473.2 հազար դրամ, կամ 105.2%:

Գովազդների մասով նախատեսված 3900.0 հազար դրամի փոխարեն հավաքագրվել է 4276.6 հազար դրամ կամ 109.7%:

Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վաճառքի թույլտվության համար գանձվել է 250.0 հազար դրամ կամ 83.3%:

Ոչ հարկային եկամուտները կատարվել են 93.7%:

Օտարման առաջադրանքը կատարվել է 100.4%-ով: Համայնքի բյուջեի ծախսային մասը կատարվել է 85.4%-ով, այդ թվում կրթության բնագավառում նախատեսված ծախսումները կատարվել են 99.8%-ով, մշակույթ և սպորտի բնագավառում 95.9%-ով, աղբահանության և սանմաքրման ծախսերը 97.5%-ով, ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունները 96,1%-ով:

Իջևան համայնքում իրականացրած աշխատանքների առումով 2018 թվականը բավականին հագեցած էր: Իրականցվել են ճանապարհների բարեկարգման, փողոցների որոշ հատվածների ասֆալտապատման, փոսալցման աշխատանքներ: Տարեսկզբին խճապատման աշխատանքներ են կատարվել քաղաքի գրեթե բոլոր փողոցներում: Միջպետական մայրուղու հիմնանորոգումից առաջացած ասֆալտի քերուկը 12 կմ հեռավորություն ունեցող Հովք հանայնքից համայնքապետարանի միջոցներով ձեռք է բերվել և տեղափոխվել Իջևան, որով բարեկարգվել են Թևոսյան, Պռոշյան, Սայաթ-Նովա, Թուխիկյան, Այգեստան, Տերյան փողոցները, Բլբուլյան փ. 25 և 82 շենքերի հարակից տարածքները: Քաղաքի ասֆալտապատ՝ Բլբուլյան, Վասիլյան փողոցներում, Ազատամարտիկների հրապարակում, Բլբուլյան փողոցից դեպի գերեզմանատուն տանող ճանապարհում իրականցվել են փոսային վերանորոգման աշխատանքներ: Ասֆալտապատում է կատարվել Սահմանադրության հրապարակում, Ալլանյան փողոցի մի հատվածում: Քաղաքի գրեթե բոլոր փողոցները խճապատվել են:

Համայնքապետարանի մշտական ուշադրության կենտրոնում է նաև նոր աշխատատեղերի ստեղծումը, փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացումը: Ներդրողներ ներգրավելու արդյունքում Անկախության փողոցում գտնվող կիսակառույցը դարձել է առևտրի կենտրոն, հետագայում այստեղ կգործի նաև ժամանցի կենտրոն: Քաղաքի արտաքին տեսքն ավելի ժամանակակից և հրապուրիչ դարձնելուց բացի, այն նպաստել է նաև նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Քաղաքաշինության ոլորտում իրականացվել են այլ նկատելի աշխատանքներ: Հիմնանորոգվել և կահավորվել է Ավանդույթ ՀՈԱԿ-ը: Վերանորոգվել է Իջևանի մարզադպրոցը: Մարզադահլիճի մանրահատակը փոխարինվել է վինիլային ծածկույթով,ծածկվել մարզագորգով: Իջևանի թիվ 5 մանկապարտեզում վերանորոգվել է խմբասենյակների հատակը, թիվ 8 մանկապարտեզը համալրվել է նոր գույքով՝ ձեռք է բերվել 32 մահճակալ: Նորոգվել են Իջևանի զբոսայգու և շատրվանների հրապարակի վնասված նստարանները: Անկախության փողոցում տեղադրվել է ցայտաղբյուր:

Կանաչ, գեղեցիկ և բնարետես քաղաք ունենալու համար համայնքային ենթակայության «Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն» հիմնարկի ուժերով քաղաքի բոլոր փողոցները մաքրվել են ավելորդ բուսականությունից, էտվել ծառերն ու թփերը, համալրվել նոր թփատեսակներով և ծառերով: Երևանյան, Մետաղագործների, Ազատամարտիկների և Արցախյան փողոցներում տնկվել է 100 բարդի, իսկ Ռուսանողական, Երևանյան, Անկախության, Ազատամարտիկների և Վասիլյան փողոցներում՝ 1500 վարդի թուփ և 80 ուռենի: Անկախության և Աշոտ Մելիքբեկյան փողոցներում տնկվել է 200 յուկայի տնկի, կանաչապատ տարածքներում՝ 1000 թավշածաղիկ:

Աղստև գետի հունը մաքրվել է ջրաբերուկներից, աղբից, գետի ընթացքը խոչընդոտող բուսականությունից:

Աղբահանությունն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով քաղաքապետարանը 2018 թվականին պայմանագրով ձեռք է բերել լրացուցիչ աղբատար մեքենա: Տարվա ընթացքում ձեռք են բերվել100 քարե և 50 մետաղյա աղբամաններ և տեղադրվել քաղաքի տարբեր հատվածներում:

Հանայնքում անվտանգ երթևեկություն ապահովելու նպատակով Վասիլյան-Մետաղագործներ փողոցներում երթևեկությունը դարձել է շրջանաձև, քաղաքում տեղադրվել են ճանապարհային նշաններ, կատարվել հետիոտն անցումների գծանշումներ:

Տարվա ընթացքում իրականացվել են լուսավորության ցանցի վերանորոգման /900մ/ և կառուցման աշխատանքներ: Լուսավորության նոր ցանց է տեղադրվել Նար-Դոս, Մետաղագործներ, Անտառային և Մեհրաբյան փողոցներում, Մյասնիկյան 2-րդ նրբանցքում:

Իջևանի քաղաքապետարանի տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժնի կողմից 2018թ կատարվել են

- աճուրդային ձևով հողամասերի օտարում՝ 33 հատ,
- մրցութային ձևով հողամասերի տրամադրում՝ 38 հատ,
- տնատիրությունների և օբյեկտների հասցեավորումներ՝-209 հատ,
- բնակելի կառուցապատման հողամասերի և շինությունների հիմքերի վերականգնում ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների" օրենքին համաձայն՝ 74 հատ,
- վերահասցեավորում՝ 63 հատ,
- հողամասերի և ինքնակամ կառույցների համայնքային սեփականության ճանաչում՝ 21 հատ,
- հողամասերի սահմանների ճշտում՝ 23 հատ,
- հողամասերի կառուցապատման իրավունքի համաձայնեցում՝ 13 հատ,
- հողամասերի ընդլայնում՝ 4 հատ,
- անհատական բնակելի տների 300.0քմ –ից ավել հողամասերի ուղղակի վաճառք՝ 3 հատ,
- ինքնակամ հասարակական կառույցների օտարում՝ 30 հատ,
- նախապատվության իրավունքով ուղղակի վաճառք՝ 4 հատ,
- հողամասերի անհատույց օտարում՝ 1 հատ,
- կառուցապատման իրավունքով հողամասի տրամադրման՝ 30 հատ,
- ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրում՝ 41 հատ,
- շինարարության թույլտվությունների տրամադրում՝ 34 հատ,
- շինարարության շահագործման փաստագրման ակտերի տրամադրում՝ 19 հատ
- հողահատկացման հիմքերի վերականգնում՝ 4 հատ
- գործառնական նշանակության փոխում՝ 74 հատ
- իքնակամ կառուցված շինությունների իրավական կարգավիճակի մասին 8 հատ
- անհատույց օտարում 2 հատ

2018 թվականին ներքին աուդիտի բաժնի կողմից քաղաքապետարանի աշխատակազմի բաժիններում և ենթակա կազմակերպություններում իրականացվել է 10 աուդիտ, որի արդյունքում կազմվել է համապատասխան հաշվետվություններ:

Աուդիտի արդյունքում հայտնաբերված խախտումները իրազեկվել են իրավասու պաշտոնատար անձանց և տրվել են համապատասխան ցուցումներ այն վերացնելու և ապագայում նույնը չկրկնելու կապակցությամբ: Ներքին աուդիտի կողմից համայնքապետարանում և ենթակայության կազմակերպություններում պարբերաբար իրականացվում է սեմինար խորհրդատվություններ կապված օրենքների և նրանցում կատարված փոփոխությունների վերաբերյալ: Կազմակերպվել են ներքին աուդիտի կոմիտեի նիստեր:

Ձեռքբերումներ կան նաև մշակույթի և սպորտի ոլորտներում: 2018 թվականին Իջևանը ճանաչվել է տարվա երիտասարդական մայրաքաղաք:

Այդ առիթով կատարվեց պաշտոնական բացման արարողություն: Իջևանում մեծ շուքով նշվեց Երիտասարդության միջազգային օրը: «Արգենտինական տանգոյի շաբաթ Հայաստանում» միջոցառման շրջանակներում Իջևանում կազմակերպվեց Արգենտինական տանգոյի օր, մեծ շուքով նշվեց նաև «Եվրոպան այստեղ է, Իջևանում» տոնակատարությունը:

Երաժշտական և արվեստի դպրոցների սաները մասնակցել են մի շարք հանրապետական և միջազգային մրցույթ-փառատոների և զբաղեցրել 1-3 պատվավոր տեղերը: Տարվա հրաշամանուկ է ճանաչվել երաժշտական դպրոցի սան Գոռ Հարությունյանը, ով հաղթող է ճանաչվել նաև Սան Ռեմո փառատոնի նախընտրական փուլում: Իջևանի և տարածաշրջանի մանկապարտեզներում և դպրոցներում տարվա ընթացքում թատերականբ ներկայացումներով հանդես է եկել մշակույթի տան «Հեքիաթ» մանկապատանեկան թատերախումբը, երաժշտական միջնակարգ դպրոցի ժողգործիքների համույթը սահմանամերձ գյուղերում կազմակերպել է համերգներ: Իջևանի մարզադպրոցում ևս արձանագրվել են հաջողություններ: Տարվա ընթացքում կազմակերպվել են մրցաշարեր, որտեղ մեր սաները ցուցաբերել են բարձր պատրաստվածություն: Նրանք մասնակցել են ֆուտբոլի, փետրագնդակի, սամբո,ազատ ոճ ըմբշամարտերի, բռնցքամարտի հանրապետական և միջազգային առաջնությունների և արժանացել 1-3 պատվավոր տեղերի: ԿԱ-ՄԵԿ մարզաձևից Իջևանն ունի աշխարհի չեմպիոն, սամբոյի աշխարհի պատանեկան առաջնության խաղերում ունենք աշխարհի փոխչեմպիոն, ազատ ոճ ըմբշամարտից Հայաստանի երիտասարդական առաջնության չեմպիոն, Եվրոպայի առաջնության 5-րդ մրցանակակիր:

Տարեվերջին, ինչպես միշտ, ընտրվեցին մարզադպրոցի 10 լավագույն մարզիկներ և մարզիչներ և խրախուսվեցին համայնքապետի կողմից:

Համայնքապետարանը շարունակում է ավանդական դարձած բարեկամությունը Ֆրանսիայի Վալանս, Ռումինիայի Գեռլա և ՌԴ Կոստրոմա քաղաքների հետ: Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի օրերին Վալանսի պատվիրակությունը քաղաքապետ Նիկոլաս Դարագոնի գլխավորությամբ հյուրընկալվել է Իջևանում: Ձեռք են բերվել համագործակցության նոր պայմանավորվածություններ:

Համայնքի հանրակրթական դպրոցների 1-4 դասարանի աշակերտներին, մանկապարտեզներ և զարգացման կենտրոններ հաճախող երեխաներին տրվել են ամանորյա նվերներ:

Իջևանի քաղաքապետարանի ֆինանսավորմամբ տպագրվել է Ռուբեն Սիմոնյանի «Իջևան» գիրքը: Իջևան համայնքի ավագանու որոշմամբ զոհված ազատամարտիկների ընտանիքներին կտրամադրվեն տնամերձ հողամասեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevancity@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՐՏԻ 2019թվականի N 16

ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ, ԹԻՎ 7Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 105,2ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի՝ Դավիթ Աղբալյանը, վարձակալության իրավունքով իրենց հատկացված, Իջևան քաղաքի Երևանյան փողոցի, թիվ 7ա հասցեում գտնվող 105,2քմ մակերեսով ոչ բնակելի տարածքի նկատմամբ իր վարձակալության իրավունքը /ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր՝ սեղանամատյան թիվ 1284, կնքված՝ 05.11.2003թ., վկայական թիվ 000697/ երկարացնելու խնդրանքով:

Ղեկավարվելով,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետի, ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 48-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի թիվ 264 հոդվածի դրույթներով.

Իջևան համայնքի ավագանին որոշում է

1.Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Երևանյան փողոցի, թիվ 7ա հասցեում գտնվող 105,2քմ մակերեսով ոչ բնակելի տարածքի նկատմամբ՝ քաղաքացի՝ Դավիթ Աղբալյանի վարձակալության իրավունքը 05.11.2003թ. կնքված և սեղանամատյան թիվ 1284 գրանցված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրով սահմանված պայմաններով մինչև՝ 2033թ. երկարացնելուն:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ
ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐՍԵՆ
ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՄԱՆ
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ
ՉԻԲՈՒԽՉՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԷՄԻԼ
ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջեվան, (0263)42138 ijevancity@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՐՏԻ 2019թվականի N 17

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ առաջարկություններ են ներկայացվել Իջևան քաղաքի մի խումբ բնակիչների կողմից ինքնակամ կառուցված, ինչպես նաև ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու համար: Առաջարկություններ են ներկայացվել նաև քաղաքաշինական և այլ նպատակներով, օրենքով սահմանված կարգով՝ աճուրդային, մրցութային և ուղղակի կարգով հողամասեր հատկացնելու մասին:

Ղեկավարվելով,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետի և ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 3-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

Իջևան համայնքի ավագանին որոշում է

1.Տալ համաձայնություն ինքնակամ կառուցված շինությունների և ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու, քաղաքաշինական և այլ նպատակներով՝ աճուրդային, մրցութային և ուղղակի կարգով հողամասեր հատկացնելու մասին առաջարկությանը համաձայն աղյուսակի.

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ
ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐՍԵՆ
ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՄԱՆ
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ
ՉԻԲՈՒԽՉՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԷՄԻԼ
ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ**

հհ	Նպատակը	Հասցե	Մակերեսը/քմ
1	Հասարակական կառուցապատում	Երևանյան փ.	268.0
2	Ընդհանուր օգտագործում	Արցախյան փ.	163.06
3	Ընդհանուր օգտագործում	Երևանյան փ.	10.1
4	Բնակելի կառուցապատում /ինք. տնտ.շին./	Երևանյան փ.	661.9հող/135.82շին
5	Ընդհանուր օգտագործում	Ս. Օհանյան փ.	400.0
6	Բնակելի կառուցապատում	Երևանյան փ.	1369.6
7.	Բնակելի կառուցապատում /ինք. ավտ./	Մետաղագործների փ.	57.16հող/57.16շին
8	Ընդհանուր օգտագործում	Սպանդարյան փ.	348.6
9	Ընդհանուր օգտագործում	Ղարագյոզյան փ.	5x19.8
10	Էներգ., կապի, տրանս. և կոմունալ ենթ. օբյեկտների	Վասիլյան փ.	229.1
11	Ընդհանուր օգտագործում	Մետաղագործների փ.	383.8
12	Ընդհանուր օգտագործում	Մետաղագործների փ.	696.6
13	Ընդհանուր օգտագործում	Մետաղագործների փ	19.8
14	Հասարակական կառուցապատում	Երևանյան փ.	8.8
15	Հասարակական կառուցապատում	Արցախյան փ.	90.5
16	Ընդհանուր օգտագործում	Սպանդարյան փ.	103.1
16	Ընդհանուր օգտագործում	Բլբուլյան փ.	19.8
17	Հասարակական կառուցապատում /ինք. խանութ/	Անկախության փ.	43.15հող/43.15շին
18	Ընդհանուր օգտագործում	Արցախյան փ.	19.8
19	Հասարակական կառուցապատում	Երևանյան փ.	90.0
20	Բնակելի կառուցապատում /ինք. ավտ./	Անկախության փ.	45.44հող/45.44շին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevancity@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՐՏԻ 2019թվականի N 18

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքի Երևանյան փողոցում գտնվող 196.25քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0082-0013/ հողամասը կադաստրային քարտեզում արտացոլված է, որպես ֆիզիկական անձանց պատկանող բնակելի կառուցապատման հողամաս, սակայն որևէ անձի անվամբ հաշվառված չէ և դրանց նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունք գրանցված չէ:

Ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 3-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով.

Իջևան համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Երևանյան փողոցում գտնվող 196.25քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0082-0013/ հողամասի նկատմամբ Իջևան համայնքի սեփականության իրավունքը գրանցելուն:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐՍԵՆ

ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՉԻԲՈՒԽՉՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԷՄԻԼ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջեվան, (0263)42138 ijevancity@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՐՏԻ 2019թվականի N 19

ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքի թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում անհրաժեշտություն է առաջացել ավելացնելու մեթոդիստի մեկ հաստիք:

Ղեկավարվելով ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով

Իջևան համայնքի ավագանին որոշում է

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը Իջևան քաղաքի թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում ավելացնել մեթոդիստի մեկ հաստիք 72751 ՀՀ դրամ դրույքաչափով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐՍԵՆ

ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՉԻԲՈՒԽՉՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԷՄԻԼ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevancity@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՐՏԻ 2019թվականի N 20

ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ անհարեժշտություն է առաջացել Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում կատարել փոփոխություն՝ ավելացնել գնումների համակարգողի մեկ հաստիք:

Ղեկավարվելով ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով.

Իջևան համայնքի ավագանին որոշում է

Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Իջևան համայնքի հաստիքացուցակում ավելացնել մեկ հաստիք՝ գնումների համակարգող 220000 ՀՀ դրամ դրույքաչափով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐՍԵՆ

ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՉԻԲՈՒԽՉՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԷՄԻԼ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevancity@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՐՏԻ 2019թվականի N 21

ՌԵՆՈ ՄԱԿՆԻՇԻ ԼՎԱՑՈՂ ԵՎ ՄԻԼԵՆԻՈՒՄ ՄԱԿՆԻՇԻ ՄԱՔՐՈՂ-ՍՐԲՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ որ շուրջ 5 տարի առաջ քույր քաղաք Վալանսից Իջևանին նվիրատվության կարգով հատկացվել է «Ռենո» մակնիշի լվացող և «Միլենիում» մակնիշի մաքրող-սրբող հատուկ մեքենաներ:

Այդ մեքենաները փորձարկվել են և պարզվել է, որ Իջևանի փողոցներում պիտանի չեն շահագործման, քանի որ աշխատանքի պրոցեսում ավելի շատ փոշի են անում, քարեր շպրտում, քանդում ասֆալտածածկույթը, միաժամանակ ծախսատար են՝ չկան պահեստամասեր:

Ղեկավարվելով ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով և հաշվի առնելով՝ համայնքի ղեկավարի առաջարկությունը

Իջևան համայնքի ավագանին որոշում է

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Ռենո մակնիշի լվացող և Միլենիում մակնիշի մաքրող-սրբող ավտոմեքենաները նվիրաբերել Հրազդանի համայնքապետարանին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱՄԻՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐՍԵՆ

ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՄԱՆ

ՉԻԲՈՒԽՉՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԷՄԻԼ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevancity@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՐՏԻ 2019թվականի N 22

ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՂԱՐԱԳՅՈՉՅԱՆ ՓՈՂՈՑԻ, ԹԻՎ 47 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԻՆ ՇԵՆՔԸ ԱՊԱՄՈՆՏԱԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքի Ղարագյոզյան փողոցի թիվ 47 հասցեում ,,Հայաստան,, համահայկական հիմնադրամի կողմից իրականացվել է 120 տեղանոց մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցման շինարարական աշխատանքներ: Անհրաժեշտություն է առաջացել, որպեսի հին մասնաշենքն ապամոնտաժվի և երեխաների համար կառուցվի խաղահրապարակ:

Ղեկավարվելով,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետի դրույթներով.

Իջևան համայնքի ավագանին որոշում է

1.Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Ղարագյոզյան փողոցի թիվ47 հասցեում մանկապարտեզի հին մասնաշենքն ապամոնտաժելուն:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱՄԻՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐՍԵՆ

ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՉԻԲՈՒԽՉՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԷՄԻԼ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevancity@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՐՏԻ 2019թվականի N 23

ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂԻ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղում սովորող գերազանց առաջադիմություն ունեցող լավագույն ուսանողի համար սահմանել կրթաթոշակ:

Ղեկավարվելով ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մասին,,օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետով

Իջևան համայնքի ավագանին որոշում է

Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղում սովորող գերազանց առաջադիմություն ունեցող լավագույն ուսանողի համար սահմանել կրթաթոշակ ,,Իջևան,, անվանումով, ամսական 10000-ական դրամ 5 ամիս ժամկետով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐՍԵՆ

ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՉԻԲՈՒԽՉՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԷՄԻԼ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevancity@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՐՏԻ 2019թվականի N 24

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2019Թ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետով.

Իջևան համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Իջևանի համայնքապետարանի 2019թ տարեկան աշխատանքային պլանը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐՍԵՆ

ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՍԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՉԻԲՈՒԽՉՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԷՄԻԼ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevancity@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՐՏԻ 2019թվականի N 25

"ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ" ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ ավագանու 2011թ. հուլիսի 25-ի թիվ 10 որոշմամբ Իջևանի Ղարագյոզյան 47 հասցեում գտնվող շենքի 3-րդ հարկի 301.3քմ ընդհանուր մակերեսով տարածքը 10 տարի ժամկետով անհատույց օգտագործման էր հատկացվել «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության Տավուշի մասնաճյուղին:

Նկատի ունենալով, որ թիվ 4-րդ մանկապարտեզի նոր մասնաշենքի շահագործման հետ կապված նախատեսված է ապամոնտաժել Ղարագյոզյան 47 հասցեի շենքը.

Իջևան համայնքի ավագանին որոշում է

1. Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքված Իջևանի Ղարագյոզյան 47 հասցեում գտնվող շենքի 3-րդ հարկի 301.3քմ ընդհանուր մակերեսով անհատույց օգտագործման պայմանագիրը համարել լուծված սկսած ս/թ ապրիլի 1-ից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ
ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐՍԵՆ
ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՄԱՆ
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ
ՉԻԲՈՒԽՉՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԷՄԻԼ
ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevancity@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՐՏԻ 2019թվականի N 26

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան համայնքի երիտասարդների շահերի պաշտպանության խումբը առաջարկություն է ներկայացրել դրամաշնորհների հայտարարման կարգով ֆինանսավորել երիտասարդական երկու նախաձեռնություն: Կարևորելով համայնքի երիտասարդներին համայնքային խնդիրների լուծման ներգրավումը և համայնքապետարանի հետ համագործակցության ու կապի ամրապնդումը, ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետով.

Իջևան համայնքի ավագանին որոշում է

Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հայտարարել դրամաշնորհային մրցույթ և երկու լավագույն ծրագիր ներկայացրած երիտասարդական խմբերին համայնքի բյուջեից հատկացնել 100.000-ական ՀՀ դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ
ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐՍԵՆ
ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՄԱՆ
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ
ՉԻԲՈՒԽՉՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԷՄԻԼ
ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ**